

օրինակէն, որ՝ ինչպէս գրած եմ արդէն¹, ընդօրինակուած է Կ. Պոլսոյ մէջ, 1772 թուին, Հոկտեմբերի 20ին, Զաքարիա Կաղզուանցիին առաջին Պատրիարքութեան ժամանակ:

Անշուշտ այս Յիշատակարանները չեն, որ ներկայ ձեռագիրս մեր ուշագրութեան առարկայ ըլլին, ոչ. ձեռագիրս ունի կարեւոր կէտ մը, որով կը տարբերի մինչեւ ցարդ ծանօթացուցած Օգոստ Բժշկութեան օրինակներէս:

Չեռագրիս մէջ Յառաջաբանութեանս վախճանը դժբախտաբար չենք կարդար Պուշիաթ Սեբաստացւոյն այն խիստ կարեւոր Յիշատակարանը, զոր կը պարունակէ Պալաթիոյ ձեռագիրս աւելի յարգի պիտի ըլլար մեզի, թէեւ առանց անոր ալ նուազ կարեւոր չէ այն:

Եթէ չունի Պուշիաթի Յիշատակարանը, ունի ուրիշ բան մը, զոր չունին մեր տեսած միւս օրինակները:

Տէր Կիրեղի Յիշատակարանէն անմիջապէս վերջը, կը կարդանք, Պուշիաթ Սեբաստացիէն այն բժշկական ոտանաւորը, զոր առաջին անգամ Բաշմաթի Տրատարակած է ժամանակին, եւ ես ալ երկրորդ անգամ Տրատարակեցի տարւոյս մէջ²: Առաջին անգամն է որ այդ ոտանաւորը ձեռագիր կը կարդամ, եւ այս իսկ կը յայտնէ, որ Պուշիաթ բաց ի իւր Յիշատակարանին, Ամիրտովլաթայ Օգոստ Բժշկութեան Յառաջաբանին կցած է նաեւ իւր ոտանաւորը, զոր աւելորդ կը համարիմ՝ դնել հոս, քանի որ դեռ նոր Տրատարակուած է:

Ահա Պալաթիոյ օրինակին միակ առաւելութիւնը, որ ուրիշ կէտերով չի տարբերիր բնաւ միւսներէն:

Բերա, 14. Նոյեմբեր 1899:

Տորթ. ՎԱՀՐԱՄ Ե. ԹՈՐԻՍՏԵԱՆ

ՄԱՅԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՅՈՎԱԼՓԵՃԱՆ ԳԱՐԵԳԻՆ Վ., Մխիթար Սամնեցի (Կերմանցի) 1260?—1337: Վաղարշապատ, տպ. Նշմ. 1899.
8 էջք 32: Գինն է՝ 15 կ.:

Մխիթար Սամնեցի ԺԳ. դարու անձ է, որ որչափ իր ժամանակ մեծ հռչակ ունէր՝ մինչեւ յատուկ ներբողեանի արժանանալ Յայրմաւուրց մէջ, յետոյ այնչափ մոռցուած եւ աննշան մատենագիր

մը համարուած է որ մատենագրութեան պատմութեանց մէջ հազիւ անունը միայն կը յիշուի՝ առանց յիշատակութեան որ եւ է գրուածքի եւ առանց կենսագրական տեղեկութեան. (տես այսպէս նոյն իսկ Զարբհ. Հայկ. Հին Դպ. տպ. 1897, էջ 768:): Յովսէփան Գ. Վ. այժմ յաջողած է փոքրիկ գրութեամբն, որ նախնաբար լոյս տեսած էր «Արարատ» թերթին մէջ (1899, Գ—Դ, էջ 158—167), լեցունել այս թերթին եւ ծախ տեղեկութիւններ տալ նոյն անձին կենաց եւ գործունէութեան մասին: Գրութեան մեծ մասն է բոսայրմ Սամնեցւոյ կենսագրութիւնը (էջ 3—26), մնացեալը՝ Մկրտչի Մեծօփեցւոյ գրած յիշեալ վարդապետին կենսագիրն:

Սամնեցի կրկին կենսագիրներ ունեցած է, Դանիէլ եւ Մկրտչի Մեծօփեցիներն, երկուքն ալ իւր աշակերտները: Առաջնոյն է այն ներբողեանը՝ զոր յիշեցինք եւ որ բոսայրմ շատ յաճախ կը գտնուի, մեր մատենագրանին մէջ քանի մ'օրինակ (տես «Յուցակ», էջ 75, 539, 544 եւ 898,) եւ որ Յայրմաւուրցներու տպագրութեանց մէջ ալ առնուած է (այսպէս տպ. Կ. Պ. 1834, Ա, 148:): Այս ներբողեանին մէջ սակայն կենսագրական մասը քիչ բան է, զոր ուրիշ տեղ մը քաղելով հաղորդած ենք. (տես «Յուցակ», 75:): Հոն հեղինակ կ'անուանուի Դանիէլ վարդապետ, իսկ ներբողեանին կրկին սրբագրող՝ Գրիգոր վարդապետ (խաթմեցի թերեւս): Երկրորդն է Մկրտչի Մեծօփեցւոյ «Պատմութիւն հաւաստի եւ համառօտ Մխիթար վարդապետի», զոր այժմ լոյս հանած է հեղինակը՝ Յովսէփան վրդ. (էջ 27—32), որ բաց աստի առջեւն ունենալով Սամնեցւոյ ժե. ծառերն ալ՝ շատ տեղեկութիւններ ալ կրցած է քաղել անոնցմէ: Ասով իւր ներկայացուցած կենսագրութիւնը կրնայ բաւական լիակատար համարուիլ: Գլխաւոր կէտերը կ'ամփոփենք յաջորդաւս:

Սամնեցի, որ յետոյ Մեծօփայ վանաց նշաւաւոր դէմքերէն եղաւ, — մինչեւ իւր ժամանակակիցներէն՝ աստուածաշնորհ եւ բանիբուն վարդապետ, «քաջ հռետոր Հայոց», նաեւ «տիեզերայրոյ վարդապետ» կոչուիլ չափազանցութեամբ, — ծնած է Սամնոյ գաւառը (— այսպէս ուղղելու է մեր թ. 10 ձեռագրին «... գաւառէն Սամնոյ» գրածը —) հօր մահուանէն ետքը փոխադրուած «յերկիրն Ապահունացի գիւղն որ կոչի Կերմանց» (թ. 70 Գերմանց), ուստի կը կոչուի նաեւ Կերմանցի, բայց նաեւ «Բանահիւս»: Ծնած ըլլալու է մերձաւորապէս 1260ին, վասն զի յիշեալ Մկրտչի համեմատ, երբ «դեռ եւս մօրուք ոչ եւս էին բուսեալ յերեսս նորա», ուստի ըսինք իբր 20 տարեկան, գնաց Մխիթար աշակերտիլ (1281ին)՝ Կերմանի Մշեցւոյ ի Գլաձոր, ուր էրէ՛ւ տարի աշակերտելէն ետքը՝ մեռաւ Կերմէս († 1284, տես Ալիշան, «Սիսական», էջ 131), եւ անոր տեղ յաջորդեց Եսայի Նեցի: Անցողակի ըսինք որ Մխիթար տաղաւին պատանի, Գլաձոր կամ Աղբերց վանք գալէն յառաջ, քահանայ ձեռնադրուած էր Բաղբերունեաց Խաչատուր եպիսկոպոսէն: Ուսումնակից էին Ստեփաննոս եւ Յովհաննէս (Արժիշեցի Ոսպնակեր), բոս ներբողագիր Դանիէլը՝ ուսումնակից էր նաեւ

1 Հանրէ-Աւօրի-թի. Յուլիս 1899, էջ 201—203:

2 Հանրէ-Աւօրի-թի. Թիւ Ապրիլի 1899:

3 Անդ: